

Էջեր ՀԱՅ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի պատմական անցյալի բժշկական գիտությունների զարգացման, ականավոր բժիշկների գործունեություն, բժշկական գրականություն, ձեռագրերի, տպագրված գրքերի, բուժական հիմնարկների և բժշկական դպրոցների գրություն վերաբերյալ հարցերը ներկայումս բավականաչափ մշակված են: Այդ հարցերին նվիրված է բավական հարուստ գրականություն հայերեն (Վ. Թորգոմյան, Կ. Բասմաջյան, Գ. Հարությունյան, Ա. Կծոյան, Հ. Սեփետյան և ուրիշներ), ռուսերեն (Լ. Հովհաննիսյան, Խ. Մելիք-Փարսադանյան և ուրիշներ), գերմաներեն (Է. Ջալդեյ, Ս. Նեյման, Հ. Վիրխով և ուրիշներ), ֆրանսերեն (Է. Լըգրեն, Վ. Թորգոմյան, Կ. Բասմաջյան) և այլ լեզուներով:

Սակայն բժշկական գիտության դեռևս ոչ բոլոր հարցերն են ժամանակակից գիտության սեփականությունը դարձել: Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթևր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-Մատենադարանի՝ խոշոր գրականական գանձարանի բժշկական աշխատությունները բավարար չափով տակավին չեն ուսումնասիրված: Հայերեն բժշկական ձեռագրեր պահպանված են նաև աշխարհի ուրիշ շատ գրադարաններում, ինչպես Վիեննայի և Վենետիկի Մխիթարյան միաբանությունների, Փարիզի ազգային գրադարաններում, Տյուրինգենի համալսարանի գրադարանում, Բրիտանական թանգարանում և այլն: Համաձայն հրապարակված գրադրուցակների, հայերեն բժշկական ձեռագրերի ընդհանուր թիվը հասնում է 1074-ի: Եթե սրան ավելացնենք նաև այն գրադարանների ձեռագրերը, որոնք դեռևս չեն հրապարակված, ինչպես նաև մասնավոր մարդկանց մոտ պահպանված ձեռագրերը, ապա նրանց ընդհանուր թիվը, օրինադիր կերպով, պետք է համարել 1500:

Այդ ձեռագրերի թվումն են հայ բժշկագիտության կլասիկների՝ Մխիթար Հերացու (XII դ.), բժիշկ Գրիգորիսի (XIII դ.)¹, Ամիր-դովլաթի (XV դ.), բժիշկ Ասար Սեբաստացու (XVI դ.) և շատ այլ հեղինակների աշխատությունները: Ուշագրավ է այն, որ այդ ձեռագրերի շարքում կան նաև հին, հունա-հռոմեական կլասիկների և միջնադարյան հեղինակների աշխատություններից առանձին հատվածներ և պատառիկներ, որոնց բնագրերը չեն հասել մինչև մեր օրերը (օրինակ՝ Դիոսկորիդի (I դ.), Օրիբասիուսի (IV դ.) աշխատությունները և այլն): Անգլիացի ակադեմիկոս բանաստեղծ Բայրոնը վենետիկի հայկական վանքում հայոց լեզուն սուսմանասիրելու ժամանակ ծանոթացել է այդ ձեռագրերին և շատ բարձր է գնահատել դրանք՝ այլ ազգերի կուլտուրական ժառանգությունն սուսմանասիրելու գործում:

Հին Հայաստանում կիրառական բժշկության դարգացման աստիճանի մասին կարելի է դատել նաև այն մեծ թվով դեղանյութերից, որոնք Հայաստանից անցել են անտիկ աշխարհի, ապա արաբական, իսկ հետագայում նաև եվրոպական բժշկության մեջ: Այդ դեղամիջոցների շարքին են պատկանում հայկական կավը, կապույտ քարը, հայկական բորակը, նաշադիրը (տրը կոչվել է «արմենիակ», որտեղից էլ, ըստ Շիլինգի, առաջացել է եվրոպական ammonium բառը), asa foetida (Պլինիոս), որդահալած «կուսո» բույսը և շատ ուրիշներ: Միջնադարյան հայ բժիշկները ծննդաբերությունը ցավազրկելու նպատակով օգտագործել են այնպիսի միջոցներ, ինչպես Ledoar, Melilatus officinalis և այլն: Ընդհանուր կամ տեղային ցավազրկման նպատակով վիրաբույժները կիրառել են dipsacus, manragora և այլ դեղանյութեր:

Հայաստանում բուժական հիմնարկներ՝ հիվանդանոցներ, բորոտանոցներ, տկարների, ծերունիների և որբերի ապաստաններ հիմնադրվել են բավական վաղ շրջանում: Առաջին բորոտանոցը (35 հիվանդների համար) հիմնվել է նախարար Սուրեն Սալահունուկնոջ՝ Աղվիդա իշխանուհու կողմից 260—270 թթ. Հիվանդանոցային հիմնարկների կառուցումը զգալի չափերի է հասել IV դարի երկրորդ կեսից սկսած՝ Աշտիշատում կայացած հայկական եկեղեցական առաջին ժողովի (365 թ.) որոշման հիման վրա:

¹ Տե՛ս Ա. Կծոյանի հոդվածը «Քննութիւն բնութեան մարդոյս և նորին զանազան կրից և պատճառանաց հիւանդութեան» աշխատության մասին, (Մատենադարանի «Բանբեր», Երևան, 1958, № 4):

Այդ շրջանում կառուցված հիվանդանոցներից ամենահայտնի-
ները եղել են Արևմտյան Հայաստանի՝ Սիվաս և Կեսարիա քաղաք-
ների հիվանդանոցները: Կեսարիայում գոյություն է ունեցել հի-
վանդանոցային մի ամբողջ թաղամաս՝ մի շարք առանձնաշենքերով,
մեկուսարաններով և այլն:

Հետագայում բուժհիմնարկներ են կառուցվում նաև Կիլիկյան
Հայաստանում: 1241 թվականին Զարեկ թագուհին Սիս քաղաքում
հիմնադրել է մի հիվանդանոց, որն իր ժամանակին մեծ համբավ է
վայելիլ:

Այդ հիվանդանոցներին անհրաժեշտ միջոցներ մատակարարվել
է տուրքերի և ժողովրդական բարեգործության կարգով ստացված
միջոցների հաշվին: Սկզբնական շրջանում դրանք տնօրինվել են
կրոնական կազմակերպությունների, իսկ հետագայում՝ աշխարհիկ
խշխանությունների կողմից:

Ավելի ուշ շրջանում հիվանդանոցներ են հիմնադրվել հայ հա-
մայնքների կամ առանձին կուլտուրական գործիչների կողմից նաև
հայկական գաղութներում: Այսպես Հայաստանից դուրս հիվանդա-
նոցներ են հիմնվել Լիտվում (XIII դ.), Մադրասում (Հնդկաստան,
XVIII դ.), Կոստանդնուպոլսում, Իզմիրում (XVIII դ.) և այլն:

Հայաստանի ուսումնական հաստատություններից, որտեղ դա-
սավանդվել են բժշկություն և բնական գիտություններ, ամենա-
հայտնիները եղել են հետևյալները.

1. Սանահնի ուսումնարանը, որի լսարանը պահպանվել է
մինչև այժմ և որտեղ XI դարի հայտնի գիտնական Գրիգոր Մա-
գիստրոսը դասավանդել է տարբեր գիտություններ, որոնց թվում
նաև բժշկություն: Մեզ հասել է մարսողության ֆիզիոլոգիայի մա-
սին նրա դասախոսական նյութը, գրված բանավիճական ոճով, ի
պատասխան նման բովանդակությամբ մի դասախոսության, որը
Անի քաղաքում կարդացել է հույն ֆիզիոլոգ Կյուրակոսը:

Ինչպես հայտնի է, Անիի համալսարանի հիմնադիր Հովհաննես
Իմաստասերը (XI դ.) իր գիտական կոնցեպցիաներում Բեկոնից
շատ առաջ խրախուսում էր էմպիրիկ մեթոդոլոգիան, գտնելով, որ
բոլոր գիտելիքների հիմքը փորձն է, որը միակ ճշմարիտն է և չի
կարող կասկած ներշնչել:

2. Տաթևի ուսումնարանը, որը կոչվել է համալսարան և որտեղ
XIV դարում հայտնի գիտնական Օհան Որոտնեցին դասավանդել է
փիլիսոփայություն և բնական գիտություններ:

Օհան Որոտնեցու մահից հետո (1388 թ.) նրա ամբիոնը անցնում է Գրիգոր Տաթևացուն (1341—1411 թթ.): Վերջինս կրոնական մի շարք երկերի հետ միասին, գրել է նաև աշխատություններ անատոմիայի և ֆիզիոլոգիայի մասին, որոնք կազմված են հարց ու պատասխանի ձևով: Նշանակալից է այն, որ Տաթևի համալսարանի դասընթացը ավարտելիս, ուսանողները պետք է պաշտպանեն գիտական մի թեմա, որը նրանց տալու էր վարդապետի (գիտնականի կամ բառի ժամանակակից իմաստով՝ դոկտորի) կոչում: Պահպանվել է մի ձեռագիր, որտեղ նկարագրվում է «վարդապետ» կոչումը ստանալու արարողությունը:

Մյուս բարձրագույն դպրոցներից, որտեղ դասավանդվել է բժշկություն, ամենահայտնին Սիս քաղաքի «Ներսես Լամբրոնացու համալսարանն» էր (XI դ.): Մեզ հասել է նրա հիմնադրի՝ դպրոցի ուսանողների համար գրած անատոմիայի դասագիրքը:

Հայտնի է նաև Սեղարի դպրոցը: Հայ պատմագիրներից Թովմա Մեծոփեցին գրում է, որ ինքը XIV դ. այդ դպրոցում ուսումնասիրել է բնական գիտություններ:

Հովհաննես Երզնկացին — Պլուզը (XIII դ.) հաղորդում է, որ իր ժամանակ ուսումնական և գիտական նպատակներով Հայաստանում թույլատրվում էր կատարել նույնիսկ վիվիսեկցիաներ՝ մահվան դատապարտված հանցագործների վրա:

Կարևոր և նշանակալից է այն, որ, ելնելով բժշկագիտության զարգացման շահերից, անհրաժեշտ դեպքերում թույլատրվում էր կատարել մահացածների հերձում: Ինչպես հայտնի է, Եվրոպայում այդ մեթոդը կիրառվել է զգալիորեն ավելի ուշ՝ XVI դարում, և օրինականացվել է Հռոմեական Պիոս 4-րդ պապի որոշումով:

Սույն հոդվածում շատ հակիրճ ներկայացված է վերջին շրջանում հայտնի դարձած պատմաբժշկական նյութերի միայն մի մասը:

Л. А. ОГАНЕСЯН

СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ МЕДИЦИНЫ

Резюме

В статье сообщаются сведения о школах высшего типа, существовавших в Армении в средние века, в которых преподавали естествознание и медицину. Таких школ было доволь-

но много, причем сохранились некоторые данные о том, какие вопросы в них разрабатывались и преподавались, и кем руководилось преподавание этих знаний; сохранилась в целости даже одна из аудиторий, в которой в XI в. велось преподавание различных наук, в том числе и медицины.

Прогрессивность воззрений ученых, преподавателей средневековых университетов Армении, видна из дошедшей до наших времен литературы, типа учебников по анатомии, физиологии, взглядов на некоторые положения, проводившиеся преподавателями медицинских и естественных наук, и пр.

Так ученый XII века Ованес Саркаваг не признавал достоверности знаний, если в основу их не был заложен опыт. Этим за много веков было предвосхищено эмпирическое направление Бекона в научной мысли нового времени.

Интересным фактом является то, что армянские врачи производили вскрытия в XIII веке, еще до того, как это было узаконено в европейской науке. В Европе вскрытия трупов стали производить в конце XIII века).

Большая, дошедшая до нас медицинская средневековая рукописная литература лишней раз подтверждает тот высокий уровень, которого достигла медицина в Армении в средние века.